Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր Երզնկայի միջնակարգ

Թեմա՝ «Գնահատման գործիքների կիրառումը Հայոց պատմության դասաժամին»

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Մարիամ Ղավթյան

Երևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳԼՈՒԽ I. ԳՆԱՀԱՏՈՒՄ Գնահատման համակարգի ձևավորման պատմական ակնարկ ....4

1. 2 Գնահատման տեսակներն ու սկզբունքները ....5

ԳԼՈՒԽ 2. 2. 1 Հայ տորոշիչ գնահատում ....7

2. 2 Ձևավորող գնահատում ....10

ԳԼՈՒԽ 3. Գնահատման գործիքների կիրառությունը Հայոց պատմության դասին դասերին ....27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ....43

Օգտագործված գրականությունների ցանկ ....46

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Գիտելիքը զրահ է բոլոր դժբախտությունների դեմ**

**ՌՈՒԴԱՔԻ**

Գիտելիքը հզոր ուժ է, որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնել ով մարդու միտքն ու հոգին: Մարդը պետք է շարունակ լցնի ու հարստացնի գիտելիքների պաշարը՝ ձգտել ով ինքնազարգացման:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատմամբ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դասի կողմից առարկայական ու դասընթացային չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: **Գնահատման հիմնական *__նպատակն է__*** սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը:

***__Գնահատումը հնարավորություն__*** ունի սովորողների մեջ ձևավորել ու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ:

**Հետազոտության արդիականությունը**: Կրթական բարեփոխումների ներկա փուլում կարևոր տեղ է տրվում գնահատման համակարգին: Առավել արդիական է դառնում երբ գնահատումը դառնում է ուսուցումը բարելավելու միջոց: Հետևաբար, ավարտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ ուսումնառությանը նպաստող գնահատման կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դասընթացներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

***Հետազոտության նպատակ:*** Ուսումնասիրել կրթական ոլորտի նորամուծությունները, գնահատման ձևերը՝ ըստ հանրակրթության պետական չափորոշչի, գնահատման մեթոդաբանությունը և դրա կիրառումը պատմության դասաժամին:

**Հետազոտության խնդիրներ՝**

- Հետազոտել գնահատման երեք տեսակները՝ հայ տորոշիչ, ձևավորող, ամփոփիչ,
- Ամբողջական պատկերացում կազմել՝ հայ տորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման համակարգերի վերաբերյալ
- Հետազոտել պատմության առարկայի գնահատման գործիքները
- Պարզել գնահատման արդյունավետությունը պատմության դասավանդման ընթացքում

# ԳԼՈՒԽ I

# ԳՆԱՀԱՏՈՒՄ

## Գնահատման համակարգի ձևավորման պատմական ակնարկ

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի: Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը[1]:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Հայ մեծանուն գրող, մանկավարժ Խ Աբովյանը, կարևորելով ուսուցման գործընթացում դաստիարակության դերը, նշում էր, որ երեխաների վարքն ուսումնաիրելու, բարոյական գծերը զարգացնելու համար կարևոր նախապայման է սիրել երեխաներին, հարգել և չվիրավորել նրանց ինքնաիրությունը, և, ընդհանրապես իրենց գործունեության ընթացքում լինել համբերող, մեղմ, ներողամիտ և հարգալից երեխայի անձի նկատմամբ: Դաստիարակության հաջողության գաղտնիքը ամենամեծ չափով պայմանավորված է դաստիարակի անձնավորությամբ, նրա բարոյական անբասիր վարքով, կենդանի օրինակով, որոնցով և ստեղծվում է նրա հեղինակությունը:

---

[1] Հանրակրթության պետական չափորոշիչ, 9, կետ37:

## 1. 2 Գնահատման տեսակներն ու սկզբունքները

Գնահատումն անհրաժեշտ է կրթության որակը բարելավելու, յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու համար:

***Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ՝***

*1) հայտորոշիչ գնահատում,*

*2) ձևավորող գնահատում,*

*3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)*[2]:

Այս հայտորոշիչ-ձևավորող-ամփոփիչ շղթան կարելի է անգամ մեկ դասի ընթացքում անել՝ փոքրիկ փուլի մեջ և այդ փուլերը կարող են կարճաժամ և երկարաժամ լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի:




***Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.***

- *Հավաստիություն*
- *Հուսալիության*
- *Օբյեկտիվության*
- *Մատչելիության*
- *Արդարության*

---

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ, 9, կետ37:

- *Թափանցիկության* [3]

***Գնահատման հիմնական գործառույթներն են.***

- *ստուգող*

- *ուսուցանող*
- *ուղղորդող*
- *դաստիարակող*
- *զարգացնող*

———————————————————————

[3] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 1, կետ3:

# ԳԼՈՒԽ2

## *2. 1 Ախտորոշիչ գնահատում*

Ախտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Ախտորոշիչ գնահատման արդյունքում պետք է բացահայտվի , թե սովորողն ինչ գիտի, չգիտի, կամ սխալ գիտի ուսուցանվող թեմայի իր վերաբերյալ , ինչն էլ հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության բովանդակությունը, գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևերը, միջոցները և մեթոդները

Ախտորոշման համար կարելի է կիրառել որոշ մեթոդներ, որոնք բացահայտում են թեմայի վերաբերյալ սովորողների ֆոնային գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները: Օրինակ՝ մտքերի տարափ, քարտեզագրում ,ԳՈՒՍ, մտածիր-զույգ կազմիր-կիսվիր, 5-րոպեանոց շարադրանք և այլն:

Ախտորոշիչ գնահատումը իրականացվում է ուսուցչի կողմից , որի արդյունքում միավորային գնահատում չի իրականացվում: Ախտորոշիչ գնահատման համար որորշ դեպքում կարող են տրվել կողմնորոշիչ բալեր,

նիշեր, որոնք չպետք է նույնացվեն 10-միավորային սանդղակի միավորների հետ:

Ախտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

***Ախտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Ախտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝***

- *թեստային գրավոր աշխատանք.*
- *բանավոր հարցում.*
- *բաց հարցերով քննարկում և այլն*[4].

**Ախտորոշիչ թեստ**

Ախտորոշիչ թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավել ու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները՝ ուսումնական գործընթացում ապահովել հետադարձ կապ և
բարելավել ուսուցումը: Ուսուցանող նպատակով կարելի է օգտագործել կարճ
ժամանակի համար նախատեսվող ախտորոշիչ թեստեր, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում:
Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի

[4] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 2, կետ 11

կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալն է, որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջընթացին: Այն պետք է նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը: Ախտորոշիչ թեստի հարցերի

քանակը կախված է մեկնարկվող փուլի տևողությունից, որը ուսուցիչը նպատակ ունի հայտորոշել, ձևավորող գնահատումն իրականացնել և ամփոփել: Եթե փուլը կարճ է , հարցերը և առաջադրանքները կարող են լինել փոքրաթիվ 3-5 առաջադրանք և կարճ ժամանակ կատարելու համար: Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի ճկուն են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի է վերլուծությունների համար:

***Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների՝***

- *ընտրովի պատասխանով*
- *կարճ պատասխանով*
- *համապատասխանեցման*
- *բաց թողածը լրացնելու հարցերով:*

Իսկ երկարաժամ փուլի համար „թեմա, կիսամյակ, տարի, կրթական աստիճան այլ „ կարող է լինել քանակով ավելի շատ և ավելի երկար ժամանակի համար: Երկարաժամ փուլի համար անցկացվող հայտորոշիչ թեստի առաջադրանքների քանակը կախված է սովորողի տարիքային խմբի և դասավանդվող թեմայի առանձնահատկություններից, սակայն ժամանակը չպետք է գերազանցի 30 րոպեն:

***Թեստի նախագիծը կազմելուց առաջ, ուսուցիչը նախ պետք է պատասխանի հետևյալ հարցերին.***

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- Ի՞նչ տեսակի հարցեր են կազմվելու՝ բա՞ց, թե՞ փակ:
- Քանի՞ հարց է ներառվելու:
- Բարդության ի՞նչ աստիճան է ընտրվելու:
- Ինչքա՞ն ժամանակ է հատկացվելու ընդհանուր թեստին

*Ախտորոշիչ թեստը ունի հետևյալ առանձնահատկությունները.*

- կիրառվում է ուսումնառության ընթացքում,
- կարճ ժամանակի համար է նախատեսված՝ 15-- 20րոպե,
- ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- հարցերը ձևակերպված են կարճ, պարզ և մատչելի,
- առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1-ին և 2-րդ մակարդակ), այն նախսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի կողմից,
- արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,
- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,
- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակության ընտանհրաժեշտության:

Ախտորոշիչ թեստը տրվում են յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնա- բանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները: Այդ վերլուծությունները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն սովորողին բարելավելու իր արդյունքները, ուսուցչի, սովորողի կամ ընկերների կողմից տանել համապատասխան աշխատանք նկատված թերությունները շտկելու, ուսուցումը խթանելու համար:

## 2. 2 Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ

դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

***Ձևավորող գնահատումը ըստ չափորոշչի՝***

- Ճշտգրտում են դասավանդվող նյութի ծավալը, բովանդակությունը, խորությունը, յուրացնել ու նվազագույն շեմը, դասավանդման մեթոդները:




- Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:
- Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ
- Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:
- Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:
- Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները,

ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

- Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:
- Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:
- Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում[5]:

*Շատ կարևոր է իմանալ ձևավորող գնահատման քայլաշարը՝*




Ձևավորվող գնահատման քայլաշարը պետք է սկսել նախնական հայտորոշմամբ, պետք է պարզել թե որտեղ է գտնվում սովորողը: Պարզել թե սովորողը իմացության, գիտելիքների և հմտությունների ինչ մակարդակում է գտնվում և թե որտեղից է պետք սկսել ուսուցման ,

ուսումնառության գործընթացը: Այնուհետև տարբեր փուլերում իրականացվում է ընթացիկ հայտորոշումներ, հետադարձ կապի, փոքրիկ թեստերի, տարբեր ձևերով կարճ հարցումների տեսքով՝ պարզել ու համար թե ինչ ձեռքբերումներ և բացթողումներ ունեն սովորողները: Եվ թե ինչ ձևերով է անհրաժեշտ տեբարել ավել ուսուցման գործընթացը:

***Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.***

- գրավոր կարճ հարցում (թեստ)
- բանավոր հարցում
- գրավոր աշխատանք
- գործնական (լաբորատոր) աշխատանք
- տնային աշխատանք
- նախագծային աշխատանք
- քննարկում,
- բանավեճ և այլն

---

[5]Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ

**Ձևավորող գնահատումը ըստ ժամանակակից մանկավարժության**

Սովորողների տրամադրվող տեղեկատվական հետադարձ կապ է

Կիրառվում է ամբողջական դասընթացի ընթացքում՝ շարունակաբար ստուգելով՝ արդյո՞ք ուսումնառություն եղել է, թե՞ ոչ

Եթե այո, ապա ի՞նչը/ինչե՞րն են նպաաստել դրան

Եթե ոչ ՝ ինչու՞ և ինչպե՞ս պետք է կազմակերպվի վերաուսուցումը

**Ձևավորող գնահատման ընթացակարգը**




## Ձևավորող գնահատման բաղադրիչ ները



Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները: Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց: Ստորև ներկայացված են մի քանի հնարներ, որոնք կօգնեն սովորողներին և ուսուցիչներին՝ ձեռքբերումները, դժվարությունները ու բացթողումները բացահայտելու, անհրաժեշտ ճշգրտումներ անելու, առաջադրանքները հնարավորինս հասկանալի դարձնելու և անսխալ կատարելու համար: Այս հնարները լավ միջոց են նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու, ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

### «Ջերմաչափում»

Այս մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով ճիշտ են կատարում հանձնարարությունը: Աշխատանք կատարելու ընթացքում մի պահ դադար է տրվում. ուսուցիչը հարցնում է. «Ի՞նչի վրա էիք աշխատում»: Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է այն աշխատանքը, ինչը ինքը մինչ այդ պահը կատարել է: Պարզ է դառնում, թե սովորողները որքանով են հասկացել հանձնարարությունը կամ դրա կատարման ընթացքը: Զույգերով կամ խմբերով աշխատելու պարագայում ուսուցիչը դիմում է որևէ զույգի կամ խմբի՝ ասելով, որ ցուցադրեն իրենց աշխատանքի ընթացքը: Մյուս զույգերը կամ խմբերը դիտում են և հասկանում, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել: Այս մեթոդը շատ կարևոր է, քանի որ փորձը ցույց է տվել, որ սովորողների մեծ մասը առաջադրանքը կատարելիս դժվարություններ է ունենում ոչ թե այն պատճառով, որ թեման չգիտի, այլ չի հասկանում առաջադրանքի պահանջը, ուսուցչի հրահանգը կամ կատարման ընթացքը: Խորհուրդ է տրվում հաճախակի կիրառել այս հնարը, որը ժամանակատար չէ և նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

### «Հարցադարան»

Հարցադրանը ներառում է մի շարք հարցադրումներ, որոնք դասի ժամանակ ուղղվում են այս կամ այն սովորողին կամ սովորողների որոշակի խմբին և օգնում են ուսուցիչներին որոշել, թե որ գիտելիքը կամ հասկացությունը չյուրացվեց սովորողների կողմից: Կիրառվում են հարցադրման մի շարք տարբերակներ, հատկապես ընդարձակ պատասխաններ պահանջող՝ սովորողներից անհրաժեշտ տեղեկություն ստանալ ու նպատակով:

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանին դրվում է քարտ՝ հետևյալ հարցերով.

- Ի՞նչ նոր բան այսօր իմացար:
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

Վերջում, ուսումնասիրելով քարտերը, ուսուցիչը համապատասխան եզրահանգումներ է անում:



- Ի՞նչ նոր բան այսօր իմացար:
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

## «Գիտելիքների բուրգ»

Դասի ժամանակ՝ նոր նյութի համառոտ ուսումնասիրությունից հետո, ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում: Այդ նպատակով յուրաքանչյուր սովորող թղթի վրա պատկերում է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով, բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է

տվյալ թեմային վերաբերող իր գիտելիքները, օրինակ՝ դրանք կարող են լինել հետաքրքիր փաստեր, օգտակար տեղեկություններ, ինքնափպառաջադրանքներ, դրական հույզեր:




Ապա այդ թղթերը կախում են դասարանի պատին: Բոլոր սովորողները հերթով մոտենում են թղթերին և կարդում գրածները: Վերջում անդրադառնում են գրված մտքերին, խմբավորում և ամփոփում:

## «Ադամանդների հիերարխիան»

Սովորողները քարտի կամ կպչուն թղթերի վրա մշակում կամ նախապես գրի են առնում տվյալ դասի թեմայի շուրջ 9 գաղափար: Սովորողները քարտերը դասավորում են վերևից ներքև ըստ կարևորության՝ հետևյալ սկզբունքով. 1-ին տողում ընտրում և փակցնում են 1 քարտ, 2-րդ տողում փակցնում են 2 քարտ, 3-րդ տողում՝ 3 քարտ, 4-րդ տողում՝ 2 քարտ և 5-րդ տողում՝ 1 քարտ



Քարտերը ստանում են աղամանդի տեսք և դասավորվում ըստ գաղափարների առաջնահերթության: Աշխատանքը կարող է իրականացվել անհատական, զույգով կամ խմբով:

## «Խմբագրական խորհուրդ»

Շարադրության խմբագրման ժամանակ ուսուցիչը նախապես գրատախտակի վրա գրում է չափանիշները: Բոլոր սովորողները հանդես են գալիս որպես խմբագրողներ, իսկ սովորողներից մեկն իր ցանկությամբ գնում է գրատախտակի մոտ՝ ստանձնելով իր գրած շարադրության ներկայացնողի դերը: Խմբագրողներն ուշադիր լսում են գրավոր շարադրանքը և հենվելով գրատախտակի վրա նշված չափանիշների վրա՝ նշում են սովորողի աշխատանքի արժանիքները և առաջարկություններ են անում՝ շարադրության բովանդակությունը բարելավելու համար: Երբ սովորողը լսում է խմբագրողների առաջարկությունները, նստում է և ուղղումներ կատարում իր աշխատանքում: Սա սովորողներին շարադրություն գրելուն նախապատրաստելու շահարմար միջոց է:

## «Արտաքին և ներքին շրջաններ»

Սովորողները կազմում են 2 շրջան՝ արտաքին և և ներքին, այնուհետև կանգնում են դեմ - դիմաց և ուսումնասիրվող թեմայից միմյանց հարցեր են ուղղում: Հարցերի պատասխանը ստանալուց հետո արտաքին շրջանի սովորողները տեղափոխվում են ժամսլաքի ուղղությամբ, կազմում նոր զույգեր և կրկին միմյանց հարցեր ուղղում:



Այդ ընթացքում ուսուցիչը դիտարկումներ է անում և նշում սովորողների թյուրընկալումներն ու դժվարությունները՝ հետագայում դրանց անդրադառնալու և շտկումներ կատարելու համար:

### «Չորս անկյուններ»

Թեմայի քննարկումից առաջ ուսուցիչը դասարանի անկյուններում փակցնում է նախապես պատրաստված 4 ցուցանակներ.

Անկյուն 1. Լիովին համաձայն եմ:

Անկյուն 2. Համաձայն եմ:

Անկյուն 3. Համաձայն չեմ:

Անկյուն 4. Բացարձակապես համաձայն չեմ:

Ուսուցիչը սովորողներներին ասում է, որ թեմայի շրջանակում հնչեցնելու է պնդումներ կամ տեսակետներ: Լսելուն պես սովորողները ծանր ու թեթև են անում հնչեցված պնդման հանդեպ իրենց վերաբերմունքն ու տեղավորվում են դասարանի չորս անկյուններում՝ ըստ թեմայի կամ մտքերի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքի: Այնուհետև ուսուցիչը հնչեցնում է մյուս պնդումը կամ տեսակետը, սովորողները կրկին լսում են և տեղավորվում են ըստ իրենց վերաբերմունքի համապատասխան անկյունում: Ուսուցիչը առաջարկում է քննարկել թեմայի շրջանակում հնչած տեսակետները, իսկ սովորողները հիմնավորում են

իրենց ընտրությունը: Քննարկման արդյունքում նրանք կարող են փոխել անկյունը: Ցուցանակները կարող են պահվել կրկին այլ թեմաներում կիրառելու համար:

## «Երեքրոպեանոց դադար»

Այս հնարքը սովորողներին հնարավորություն է տալիս կանգ առնելու, խորհելու նոր նյութին առնչվող մտքերի, հասկացությունների շուրջ: Դադարն օգնում է նոր նյութը կապել նախորդ նյութերից ստացած գիտելիքների և փորձառության հետ: Սովորողներին առաջարկվում են հետևյալ արտահայտությունները.




## «Ելքի քարտեր»

Ելքի քարտերի միջոցով դասի ավարտին հավաքագրվում են սովորողների պատասխանները: Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին:

*Ելքի քարտերի օրինակներ՝*


1. Նշի՛ր 3 բան, որ սովորեցիր այսօր:
2. Նշի՛ր 2 բան, որ հետաքրքրեց քեզ:
3. Նշի՛ր 1 բան, որ մնաց անհասկանալի:

**Երբեմն դասի սկզբում, երբ ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում են մուտքի քարտեր[6]:**

*Մուտքի քարտի օրինակ՝*


1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան, որ կարևորում ես:
3. Նշի՛ր 1 բան, որին կուզենայիր այս դասին կրկին անդրադառնալ:

6 **https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html**

## Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝

դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում[7]:

**Ամփոփիչ գնահատման տեսակները**

**Միավորային գնահատում**

. Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:

. Միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են.

**. Բանավոր հարցում**

**. Գործնական աշխատանք**

**. Թեմատիկ աշխատանք**

**. Կիսամյակային ամփոփիչ աշխատանք:**

Տնային և կարճ ժամանակի համար

**Բնութագրող գնահատում**

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

Դրական է գնահտվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրյուն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր փորձ:Խրախուսվում են նախաձեռնողականության յուրաքանչյուր դրսևորում, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումներ

7 Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ

Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝




**Միավորային գնահատումն** ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է <<**Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող** է>>: Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տասստուգել ու ցանկացած սովորողի իրական կարողությ

ունները: Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

**1 միավոր**

- **Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ**

**2 միավոր**

- **Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի**

**3 միավոր**

- **Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:**

**4 միավոր**

- Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:

**5 միավոր**

- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:

**6 միավոր**

- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով

**7 միավոր**

- Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:

**8 միավոր**

- Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:

**9-10 միավոր**

- Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
- Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացված արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ[9]:




---

[9] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 5, կետ41

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին:

———————————————————————

[10] Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ, 6, կետ

# ԳԼՈՒԽ 3

## Գնահատման գործիքների կիրառությունը Հայոց պատմության դասին դասերին

Գնահատումը անընդհատ տեղի ունեցող շարունակական գործընթաց է: Այն ամենուր է: Գնահատումը ձևավորում է աշխարհայացք, քննադատական մտածողություն: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ է:

Հայոց պատմություն առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցներում նպատակ ունի սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի հայրենիքի, հայկական արքայական ու իշխանական տոհմերի, պետականության պահպանման համար հայության մղած հերոսական պայքարի, հայ մարդու ստեղծած մշակութային կոթողների հետ: Հետևաբար պետք է գիտակցել հայոց պատմություն առարկայի դասավանդման որակի և նոր սերնդի կողմից դրա յուրացման ու արժևորման կարևորությունը: Ուստի ցանկացած մեթոդ, հնար, գնահատման գործիք ու տեսակ պետք է կիրառել այս առարկայից սովորողների առաջընթացն ապահովելու համար:

Հայոց պատմության դասաժամերին կիրառվում են գնահատման բոլոր ձևերը: Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում, սովորողի ուսումնական առաջընթացն ապահովելու նպատակով հաճախ կարելի է կիրառել բանավոր հարցման ձևավորող /ուսուցանող/ գնահատման տարբերակը: Առանձնացրել ենք բանավոր խոսքին ներկայացվող 3 հիմնական պահանջներ` բովանդակություն, կառուցվածք և արտահայտման /ներկայացման/ ձև:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Խոսքի բովանդակությունը** | Խոսքը չի համապատասխանում է թեմային, արտահայտված մտքերը անհասկանալի են: | Խոսքը կառուցված է թեմայի շուրջ, մտքերը համակարգված չեն, բառապաշարը մասամբ է համապատասխան ու թեմային: | Խոսքը համապատասխանում է թեմային, ձևակերպում է ինքնուրույն մտքեր, կիրառում է համապատասխան բառապաշար | Խոսքը համապատասխանում է թեմային, պարունակում է պատճառահետևանքային կապեր և լրացուցիչ նյութեր | Խոսքը համապատասխանում է թեմային, կառուցված է վերլուծությունների և պարզաբանող օրինակների վրա |
| **Խոսքի կառուցվածքը** | Մտքերը կապակցված չեն` թռչում է մտքից միտք | Ասելիքը ներկայացնում է հատվածաբար, առկա են լեզվական սխալներ | Խոսքը ամբողջական են, գրքային ձևակերպումներով, չկա խոսքային սխալներ | Խոսքը գրագետ է մտքերը ձևակերպում է ինքնուրույն, հակիրճ կամ ընդարձակ | Խոսքը գրագետ է, տրամաբանված, ներկայացնում է պահանջված տարբերակով „ընդարձակ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համառոտ հարազատ մնալ ով տեքստին և այլն„ |
| **Արտահայտման ձևը** | Մռքերն արտահայտում է անվիսատ, երկմտելով | Խոսքը ծգծգված է, կրկնություններով, անահրկի դադարներով | Խոսքը սահուն է, առկաեն տարամաբանական դադարներ | Մտքերը հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ | Մտքերն արտահայտում է վստահ, համոզիչ է արտահայտելով սեփական տեսակետը, ապահովելով կապը դասարանի լսարանի հետ |

Սույն ռուբրիկը նախատեսված է բանավոր հարցման ձևավորող /ուսուցանող/ գնահատման համար, որի արդյունքում միավորային գնահատում չի ենթադրում:

*Բացի բանավոր հարցումից հայոց պատմության դասին կարելի է կիրառել ուսուցանող գնահատման հայտորոշիչ հետևյալ տեսակները.*




*Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտել ու նպատակով կիրառվում է պարտադիր գրանցման ենթակամիավորային /թվանշանային/ գնահատման երեք հիմնական տեսակները.*

24




**Պատմություն**

## Բանավոր պատասխանի գնահատման ռուբրիկ

| Միավորներ/ Չափանիշներ | 10 | 9-8 | 7-6 | 5-4 | 3-1 |
|---|---|---|---|---|---|
| Նյութի իմացություն | Ցուցաբերում է ուսումնասիրվող նյութի հիմնավոր իմացություն, ներկայացնում է թեմայի մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացությունները, երևույթները և գործընթացները | Ցուցաբերում է ուսումնասիրվող նյութի հիմնավոր իմացություն, ներկայացնում է թեմայի մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացությունները, երևույթները և գործընթացներ | Ներկայացնում է տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների և գործընթացների կեսը | Ներկայացված նյութը մակերեսային է և ոչ հիմնավոր: Ներկայացվել է տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների միայն 1/4-ը | Պատասխանը ամբողջությամբ սխալ է, կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը: |
| Պատճառահետևանքային կապերի վերհանում, բազմակողմանի վերլուծություն | Բացահայտված է պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը: Պնդումները հիմնավորված են ու փաստարկված: Ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների իմաստն ու էությունը, | Բացահայտված է նպատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերի 90 տոկոսը-ը, պնդումները հիմնականում հիմնավորված են ու փաստարկված, ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների | Հասկացությունները հիմնականում ճիշտ են մեկնաբանված, սակայն չկան փաստարկներ: Բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերի միայն կեսը Պնդումների կեսն է հիմնավորված ու փաստարկված Ճիշտ է ընկալվել | Հասկացությունների մեծ մասը կամ մեկնաբանված չէ, կամ մեկնաբանված է սխալ Գրեթե բացակայում են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած պատճառահետևանքային կապերը, ներկայացված հարցերը մասամբ են համապատասխան | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կատարվել են ճիշտև հիմնավոր եզրահանգումներ | իմաստն ու էությունը | պատմական փաստերի և երևույթների միայն կեսի իմաստն ու էությունը | ունտվյալ թեմայի բովանդակությանը, կան լուրջ թերություններ և բացթողումներ | |
| Լրացուցիչ նյութի համադրում և ամփոփում | Ներկայացնում է լրացուցիչ նյութ և համադրում թեմային | Բացակայում է լրացուցիչ նյութը,ներկայացվում է միայն դասագրքայինը | Լրացուցիչ նյութը բացակայում է | | |
| Ստեղծագործական մոտեցում | Ցուցաբերում է ինքնուրույն ստեղծագործական մոտեցում, արտահայտում և հիմնավորում է սեփական տեսակետը | Մասամբ է ցուցաբերում ստեղծագործական մոտեցում, սեփական կարծիքը վստահ չի արտահայտում | Սեփական դիրքորոշում չի արտահայտում | Սեփական դիրքորոշում չի արտահայտում | |
| Արժևորում | Դրսևորում է գնահատման և արժևորման հմտություն | Մասամբ է դրսևորում գնահատման և արժևորման հմտություն | Չի դրսևորում գնահատման և արժևորման հմտություն | Չի դրսևորում գնահատման և արժևորման հմտություն | |

## Պատմություն

## Բանավոր պատասխանի գնահատման չափանիշներ

| Միավորներ | Պատասխանի բովանդակությունը |
|---|---|
| 10 միավոր | Շարադրանքը լիարժեք է և ամբողջական:<br>Շարադրանքում՝<br>• օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացությունները, երևույթները և<br>• գործընթացները հասկացությունները ճիշտեն |

| | |
|---|---|
| | մեկնաբանված և բերված են մի շարք համոզիչ փաստարկներ<br>- բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր<br>- պատճառ-հետևանքային կապերը պնդումները հիմնավորված են ու փաստարկված<br>- ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների իմաստն ու էությունը<br>- կատարվել են ճիշտ և հիմնավոր եզրահանգումներ |
| 9-8 միավոր | Շարադրանքը հիմնականում ամբողջական է, բայց կան որոշ թերություններ:<br>Շարադրանքում՝<br>- օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի,<br>- հասկացությունների, երևույթների և գործընթացների 3/4-ը հասկացությունները հիմնականում ճիշտ են մեկնաբանված և բերված են մեկ-երկու համոզիչ փաստարկներ<br>- բացահայտված է ն պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր<br>- պատճառահետևանքային կապերի 3/4-ը պնդումները հիմնականում հիմնավորված են ու փաստարկված<br>- ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների 3/4-ի իմաստն ու էությունը<br>- կատարվել են ճիշտ եզրահանգումներ |
| 7-6 միավոր | Շարադրանքը լիարժեք չէ և ունի էական թերություններ:<br>Շարադրանքում՝<br>- Օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի,<br>- հասկացությունների, երևույթների և գործընթացների միայն կեսը Հասկացությունները հիմնականում ճիշտ են մեկնաբանված, սակայն չկան փաստարկներ<br>- Բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր |

| | |
|---|---|
| | • պատճառ-հետևանքային կապերի միայն կեսը Պնդումների կեսն է հիմնավորված ու փաստարկված<br>• Ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների միայն կեսի իմաստն ու էությունը<br>• Կատարվել են եզրահանգումներ, սակայն դրանք ոչ միշտ են ճիշտ |
| 5-4 միավոր | Շարադրանքը մակերեսային է և ոչ հիմնավոր:<br>Շարադրանքում՝<br>• Օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի,<br>• հասկացությունների, երևույթների և գործընթացների միայն 1/4-ը Հասկացությունների մեծ մասը կամ մեկնաբանված չէ, կամ մեկնաբանված է սխալ<br>• Գրեթե բացակայում են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած<br>• պատճառ-հետևանքային կապերը պնդումների 1/4-ն է հիմնավորված ու փաստարկված<br>• ներկայացված հարցերը մասամբ են համապատասխանում տվյալ թեմայի բովանդակությանը,<br>• կան լուրջ թերություններ և բացթողումներ բացակայում են համապատասխան եզրահանգումները |
| 3-1 միավոր | • Պատասխանը ամբողջությամբ սխալ է, առնչություն չունի ուսուցանվող նյութի բովանդակության հետ, կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը: |

7-րդ դասարանում Հայոց պատմության առարկայից „Արտաշեսյան Հայաստանի կազմավորումը: Արտաշես 1-ին„ թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել բանավոր հարցման միավորային գնահատման հետևյալ ռուբրիկը.

| | |
|---|---|
| Նվազագույն մակարդակ<br>/4-5 միավոր | Բանավոր խոսքով աշակերտը պետք է ներկայացնի<br>• Արտաշես 1-ի կառավարման տարեթվերը<br>• Ներկայացնել Արտաշես I-ի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից գոնե մեկը<br>• Թվարկի Արտաշես առաջինի կատարած բարեփոխումներից 1-2-ը |
| Միջին մակարդակ<br>/6-7 միավոր/ | • Ներկայացնել, բացատրել, արժևորել Արտաշես I-ի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները<br>• թվարկել և բացատրել Արտաշես I-ի բարենորոգումները,կատարած շինարարական աշխատանքները:<br>• վերլուծել Արտաշես I–ի ներքին ու արտաքին քաղաքականությունը<br>• արժևորել Արտաշես I-ի կողմից հայկական տարածքների միավորման կարևորությունը մեկ պետության մեջ |
| Առավելագույն մակարդակ<br>/8-9-10 միավոր | • Գնահատել Արտաշես I արքայի բարենորոգումները,նրա գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:<br>• Տեսակետ արտահայտել Արտաշես I արքայի ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ<br>• Արդիականացնել Արտաշես I–ի բարենորոգումների կարևորությունը հայոց պետության կայացման գործում:<br>• Գնահատել Արտաշես I արքայի դերը հայոց պատմության մեջ: |

Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում մեկ կիսամյակի ընթացքում պետք է հանձնարարել նվազագույնը մեկ գործնական աշխատանք:

Տարբերակում ենք հայոց պատմության առարկայի համար միավորային գնահատման ենթակագործնական աշխատանքի հետևյալ տեսակները.




Մեր աշխատանքում կանդրադառնանք գործնական աշխատանքի „Գծակարգերի կազմում„ տարբերակին:

Օրինակ 7-րդ դասարանում հայոց պատմության առարկայից „Արտաշեսյան թագավորություն„ թեմաները ուսումնասիրելուց հետո կարելի է հանձնարարել հետևյալ գծակարգով գործնական աշխատանքը.

**Առաջադրանք 1.Լրացնել Արտաշեսյան թագավորության արքաներին վերաբերող աղյուսակը**

/10 միավոր/

| Արքա | Կառավարման ժամանակաշրջանը | Տվյալ արքայի ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձություն |
|---|---|---|
| Արտաշես 1-ին | Ք. ա. 189-160 թ. թ. | 1. Կառուցել է Արտաշատ մայրաքաղաքը<br>2. Իրականացրել է հողային |

| | | |
|---|---|---|
| | | բարեփոխումներ |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

**Գործնական աշխատանքի տրված օրինակի գնահատման ռուբրիկ**

| 10 միավոր | | |
|---|---|---|
| | Քանակը | Քայլը |
| Արքայի անունը | 10 | 0,25 |
| Կառավարման ժամանակաշրջանը | 10 | 0,25 |
| Կարևոր իրադարձությունը | 10 | 0,5 |

Թեմատիկ աշխատանք.Յուրաքանչյուր թեմայից սովորողների ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսվում է ծավալուն գրավոր աշխատանք: Այն պետք է կազմված լինի տվյալ թեմայից սովորողներին ներկայացվող առարկայական չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից: Ընթացիկ գնահատման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են`

- ✓ *Տևողությունը` մինչև 45 րոպե*

- ✓ *Առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացություն, գիտելիքներ կիրառում,տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, համեմատություն, ստեղծագործական մտածողություն*

Օրինակ 7-րդ դասարանում հայոց պատմություն առարկայի „Հայկական լեռնաշխարհ„ բաժինն ուսումնասիրելուց հետո կարելի է հանձնարարել նմանատիպ թեմատիկ աշխատանք.

## Հայոց պատմություն

## Թեմատիկ գրավոր աշխատանք

## Առաջին կիսամյակ

## 7-րդ դասարան

## Տարբերակ 1

**Առավելագույն միավորը՝ 10**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ, N 1-8, յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր.**

**1.Ինչպե՞ս են անվանում մեր երկիրը օտարները.**

ա) Հայք

բ) Հայաստան

գ) Արմենիա

դ) Արարատ

**2. Ո՞րն է մեր հայրենիքի մայր գետը.**

ա) Արածանի

բ) Երասխ

գ)Տիգրիս

դ) Կուր

**3. Ո՞ր ձեռքբերումն է եղել Հին քարի դարում.**

ա) երկաթ

բ) կրակ

գ) բրոնզ

դ) անագ

**4. Ե՞րբ է հայտնագործվել նետու աղեղը**

ա) պալեոլիթում

բ) մեզոլիթում

գ) էնեոլիթում

դ) նեոլիթում

**5. Համաձայն <<տափաստանային>> որտե՞ղ է գտնվել հնդեվրոպական նախահայրենիքը.**

ա) Հայկական լեռնաշխարհում

բ) մերձվոլգյան տափաստաններում

գ) Եվրոպայում

դ) Հնդկաստանում

**6. Ըստ սկզբնաղբյուրների ինչպե՞ս է կոչվել Հայկական լեռնաշխարհի առաջին վաղպետական կազմավորումը.**

ա) Հայասա

բ) Արատտա

գ) Էթյունի

դ) Արմե

**7. Ո՞ր դարաշրջանում է ընտելացվել ձին.**

ա) բրոնզի դարում

բ) երկաթի դարում

գ) նոր քարի դարում

դ) միջին քարի դարում

**8. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաքաղցրահամ լիճը.**

ա) Վան

բ) Թորթում

32

գ) Սևան

դ) Ուրմիո

**Կառուցվա պատասխանով առաջադրանքներ, N 9-10, յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր.**

**9. Ինչպե՞ս է կոչվում Հայկական Պար լեռնաշղթայի և Արագածի լեռնազանգվածի միջև ընկած դաշտը.**

______________________________________________

**10. Որտ՞ղ է տեղակայված եղել Նաիրի երկիրը ըստ ասորեստանյան սկզբնաղբյուրների:**

_______________________________________________

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ, N 11-12, յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր.**

**11. Համապատասխանեցնել համարժեք անունները.**

1.Սևանա լիճ    ա) Բզնունյաց ծով

2. Մեծ Արարատ — բ) Արևելյան Եփրատ

3. Արածանի — գ) Ուրմիո լիճ

4. Վանա լիճ — դ) Արարատ

5. Կապուտան — ե) Գեղամա լիճ

| | |
|---|---|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |
| 5 | |

**12. Համապատասխանեցնել հնագույն մարդկանց կարևոր նվաճումները ժամանակաշրջանի հետ**

1. պալեոլիթ — ա) մշտական կացարանների առաջացում

2. նեոլիթ — բ) եզների օգտագործումը որպես քաշիչ ուժ

3. մեզոլիթ — գ) ձեռքի հատիչի պատրաստումը

33

4. բրոնզի դար — դ) բրիչային հողագործության սկզբնավորումը

ե) արորի գյուտը

| | |
|---|---|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք N 13, յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր.**

**13. Նախնադարյան հասարակությունում տեղի ունեցած փոփոխությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) բրոնզի հայտնագործումը

բ) վայրի կենդանիների ընտելացումը

գ) պղնձե աշխատանքային գործիքների ստեղծումը

դ) երկաթի հայտնագործումը

| | |
|---|---|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |

**14.Բացատրել բառերը և բառակապակցությունները. 2 միավոր**

**Հնդեվրոպական նախալեզու ------------------------------------------------------------------------**

**-----------------------------------------------------------------------------------------------------------**

**----------------------------------------------------------------------------------**

**Բրոնզե դար**------------------------------------------------------------------------------------------

**-------------------------------------------------------------------------------------------**

**Հոմո սափիենս**-----------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------------------

----------------------------------------------------------------------------

**Գաղթ**----------------------------------------------------------------------------------------------

-------------------------------------------------------------------------------------

**15. Շարադրանք 2 միավոր**

**Ներկայացրե՛ք <<օազիսային տեսությունը>>.**

-----------------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Թեմատիկ աշխատանքի տրված օրինակի գնահատման ռուբրիկ

| 10 միավոր | |
|---|---|
| 1-8 | 0,25 |
| 9-10 | 0,5 |
| 11-13 | Յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,25 |
| 14 | 2 |
| 15 | 2 |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության արդյունքում եկանք հետևյալ եզրահանգմանը որ, այսօր ուսուցիչների համար բարդ իրավիճակ է ստեղծվել: Բարդ իրավիճակ է ստեղծվել քանի որ, մանկավարժական գիտության և իրականության մեջ տեղի են ունենում լուրջ

փոփոխություններ: Այս փոփոխությունները իր հերթին առաջ է քաշում ուսուցման, ստուգման և գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են համապատասխան վերապատրաստումներ: Այսպիսով

- Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում, որպես սկզբունք, նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը:
- Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտել ու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնադրսևորմանը:
- Աշակերտն իր ուսումնառության արոցեսը կկարողանալ ավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները:
- .Աշակերտների ուսումնառությանը նպաստող ամենամեծ գործոնը արդյունավետ ուսուցման կազմակերպումն է, որն էլ ապահովում է սովորողների գիտելիքների, կարողությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանը:
- Գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման, սովորողի խրախուսման և շարունակական զարգացումն ապահովող միջոց է: Գնահատման նոր համակարգը միտված է պարզելու յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանդարտ առարկայական չափորոշիչների ու ծրագրերի կատարման պահերը:
- Գնահատման գործիքները օգնում են սովորողին բարելավելու սեփական գիտելիքներն ու ընկալումները, խթանելու ինքնավստահությունն ու գնահատելու սովորելու կարևորությունը, ինչպես նաև ինքնանդրադարձ, վերլուծություններ կատարելու, զարգացնելու ինքնագնահատման հմտությունները և բացահայտելու հաջողության հասնելու երաշխիքներ:
- Ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, քննարկում, նկարագրում է սովորողի ձեռքբերումները, նրա ուժեղ և թույլ կողմերը ու դրան համապատասխան պլանավորում կամ վերանայում իր քայլերը:

Ուսուցչի կողմից գրագետ իրականացված գնահատումը և որակյալ հետադարձ կապը բարելավում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները, բարձրացնում է ուսումնառության որակը, սովորողների մոտիվացիան և վերլուծականությունը:Իրականացվում է հետադարձ կապ, որտեղ նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում համապատասխան հետևություններ: Ուստի արժևորում, դատողություններ արվում է աշակերտի արածի և ձեռք բերածի արժեքային համակարգի մասին:

- Կրթության ոլորտում տեղ գտած փոփոխություններն հնարավորություն են տալիս ընտրել դասապրոցեսի վարման ձևեր, հնարներ:
- Անհրաժեշտ է միշտ հիշել , միավորային գնահատումը չպետք է լինի զենք, այլ պիտի ներկայացնի ուսումնառության իրական որակն ու առաջադիմությունը:

# Օգտագործված գրականության ցանկ


1. Մ. Առաքելյան, «Գնահատում: Ամփոփիչ / միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները», https://znanio.ru/media/metodika-262756

2. «ԿԶՆԱԿ» Հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին - Հայտորոշիչ թեստ/ https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_74.html?m=1 /

3. https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_74.html

4. Բանավոր հարցում.pdf

5. Ձևավորող գնահատման բաղադրիչները.pdf

6. ՀՊՉ հետագոտական.pdf

7. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշնե